
ՀԱՐՑԵՐՈՎ ԲԱՌԵՐԻ ՏԵՄԱԿՆԵՐՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈՂԸ*

ԲԱԳՐԱՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Խոսքի մասերի դասակարգումը կամ, ավելի ստույգ, բառերի տեսակները սահմանելը և՛ ընդհանուր, և՛ հայ լեզվաբանության ամենաբարդ, բայց և միաժամանակ ամենակարևոր խնդիրներից է: Բարդությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ մինչև հիմա բառի համընդհանուր ճանաչում գտած սահմանում չկա, իսկ բառերի տեսակների կամ խոսքի մասերի համակարգային դասակարգումը, ի վերջո, բառերի տարրոճում է:

Սա նշանակում է, որ անհրաժեշտ է պարզաբանել, թե մինչև հիմա գոյություն ունեցող դասակարգումներից, այնուամենայնիվ, ո՞րն է ամենից ավելի անհակասականը, առավել համոզիչը:

Բանն այն է, որ, իրոք, լեզվական, բառարանային բոլոր միավորները նույն չափանիշով գնահատվել ու տարրոճվել չեն կարող, քանի որ դրանց մի մասով մենք կարող ենք խոսել, հաղորդակցվել, իսկ մյուսով՝ ոչ: Մենք մտածում ու հաղորդակցվում ենք բառերով, այն լեզվական միավորներով, որոնք առարկաների, երևույթների, հատկանիշների անուններ են, մինչդեռ այդպիսին չհանդիսացող հնչյուններով ու հնչյունակապակցություններով մենք ո՛չ մտածել կարող ենք, ո՛չ խոսել և ո՛չ էլ հաղորդակցվել: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ հաղորդակցական արժեք ունեցող և հաղորդակցական արժեք չունեցող լեզվական միավորները նույն չափանիշներով, միևնույն ելակետով սահմանվել չեն կարող:

Առարկաների, հատկանիշների անուն ասելիս պետք է սահմանել, թե ինչ է **անունը**: Տրամաբանության մեջ **անուն** նշանակում է իմաստաբանական եռանկյունու արտահայտություն. այն է՝ ա) հնչյուն կամ հնչյունախումբ, բ) նրանով նշանակվող առարկա կամ հատկանիշ և գ) իմաստ կամ նշանակություն: Կարող ենք ասել, որ տրամաբանական այս բնութագիրը լեզվաբանորեն կլինի բառի սահմանումը, որին կավելանա այն, որ այս անուն-բառերը իրենց վերոհիշյալ հատկանիշների շնորհիվ կարող են նաև առանձին, անկախ, ինքնուրույն գործածվել և ունենալ բառային շեշտ:

Այս հանգամանքի շնորհիվ է, որ առարկա և հատկանիշ ցույց տվող բառերը մենք կարող ենք օգտագործել, առարկաներին ու երե-

* Աշխատանքը կատարվել է հայ-ռուսական համալսարանի պատվերով, Ռուսաստանի Դաշնության կրթության, գիտության նախարարության ֆինանսական միջոցների հաշվին:

վույթներին վերագրել որոշակի հատկանիշներ և ստանալ դատողություն, այսինքն՝ նախադասություն, երբ այդ վերագրումը տեղի կունենա քերականական դեմքի, թվի ու ժամանակի միջոցով՝ ստորոգումով: Դանշանակում է, որ մենք անուն-բառերով կկարողանանք մտածել, քանի որ մեր գիտակցության մեջ կան տվյալ լեզվով հաղորդակցվողներիս համար հայտնի բառիմաստները, որոնց շնորհիվ էլ կարողանում ենք մտածությունը՝ խոսքը, արտադրել, մեր մտքերը հաղորդել և ուրիշներինը ընկալել, հասկանալ:

Այդ անուն-բառերը համապատասխան իմաստների շնորհիվ համակարգվում են որպես հասկացություններ, որ առարկաների, երևույթների էական հատկանիշների վերացարկված արտացոլումն են մեր գիտակցության մեջ:

Ասվածից պարզ երևում է, որ բառը սահմանելիս ու դրա հիման վրա խոսքի մասերը դասակարգելիս անհնար է մնալ լեզվաբանության սահմաններում, քանի որ բառիմաստը կարելի է բնորոշել միայն փիլիսոփայության, տրամաբանության վրա հենվելով:

«Ավանդական» կոչվող խոսքի մասերի դասակարգման հեղինակները՝ Գ. Սևակը և Ա. Ղարիբյանը, այդպես էլ արել են. նրանց էլակետն այդ ասպարեզում եղել է մարքսիստական փիլիսոփայությունը:

Պատահական չէ, որ այս դասակարգումը կոչվում է «իմացաբանական»¹: Իմացաբանական սկզբունքի համաձայն՝ լեզվական բոլոր միավորները համարվում են բառեր՝ առանց տարբերակելու դրանց էական հատկանիշները, այն է՝ անվանական-հասկացական իմաստի առկայությունը-բացակայությունը: Սա է պատճառը, որ դերանունը, որը գուրկ է անվանողական կարևորագույն իմաստից, համարվում է ամենաընդհանրական բառը, զուտ շարահյուսական կամ վերաբերմունքային գործառություն ունեցող հնչյուններին ու հնչյունակապակցություններին վերագրվում են անվանողական-հասկացական իմաստ ունեցող բառերին հավասարագոր, թեպետ յուրահատուկ «բառային իմաստներ»:

Հասկանալի է, որ էլակետային այս ոչ միասնական դրույթի միջոցով անհնար է ստանալ խոսքի մասերի, իսկ այս դեպքում՝ լեզվի մասերի անհակասական դասակարգում: Ուստի և պատահական չէ, որ Գ. Սևակի «Խոսքի մասերի ուսմունքի» մասին Հր. Աճառյանը գրում է. «Բայց այստեղ էլ կա միայն հին սիստեմի քննադատությունը, հերքումը, բայց թե ինչ է իր առաջարկելիք նոր ձևը, բնավ հայտնի չէ»²:

Ավելացնենք հետևյալը: Ռուսերենի **ѳ**ՐՕ դերանունը **այս** թարգմանելը, ինչպես արել է Գ. Սևակը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ, նախ **այս**-ը առաջին հերթին պատասխանում է ուր հարցին, որ ենթադրում է հատկանիշ, երկրորդ **ѳ**ՐՕ **ѳ**ՐՕ-ի դեպքում հա-

¹ Տե՛ս Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀ «Գիտական աշխատություններ», հ. 11, Եր., 1939:

² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1957, էջ 20:

մարժեքը կլինի **ի՞նչ է սա** և ոչ թե **այս**: Գոյի հարցը չի կարող լինել հատկանիշ բացահայտող հարց. **ջրօ**-ն պետք է ըստ իրադրության թարգմանել **սա** կամ **դա**:

Պարզ երևում է, որ գուտ մատնանշող իմաստ ունեցող դերանունը միայն իրադրական գործառնություն կարող է ունենալ և խոսքից դուրս պարզապես անհասկանալի է, քանի որ իրադրությունից դուրս նրա «իմաստը» փոշիանում է: Մա իր հերթին նշանակում է, որ անվանողական, հասկացական իմաստ չունեցող դերանունը որպես բառ կարող է հանդես գալ միայն այն դեպքում, երբ հայտնի է, թե որ բառին է փոխարինում, և այդ ժամանակ կդառնա տվյալ բառի դերանուն տարատեսակը:

Ինչ վերաբերում է աստիճանական դասակարգմանը, որի հեղինակը Ս. Աբրահամյանն³ է, ապա այս դեպքում ևս դասակարգման ելակետը միասնական չէ: Աստիճանական ասածը ենթադրում է նախ այն, որ անցում է կատարվում հասկացականից քերականական իմաստին: Հենց այստեղ էլ խախտվում է սկզբունքը, քանի որ քերականական իմաստը հավասարազոր չէ անվանողականին, հասկացականին. քերականականը հարաբերողական իմաստ է, բացատրում է, կարողանում է վեր հանել կապակցությունների միջև եղած քերականական, տրամաբանական կապը և ոչ թե կապակցվողների գոյաբանական էությունը:

Այս առումով աստիճանական դասակարգումը ոչ թե հասկացական իմաստ ունեցող բառեր դասակարգելու ելակետային սկզբունքի հաջորդ աստիճանն է, այլ նախորդի հետ տրամաբանական, անմիջական կապ չունեցող բոլորովին ուրիշ սկզբունք, որի ելակետն արդեն ոչ թե առարկան, հատկանիշը սահմանելն է, այլ՝ հասկացական արժեք ունեցող բառերի հարաբերությունը վերհանելը:

Հաջորդ աստիճանն արդեն նախորդ երկուսի հետ ընդհանրապես կապ չունի, քանի որ ընդգրկում է վերաբերողական արտահայտություն: Քանի դեռ չկա բառ կամ խոսք, ասույթ, չի կարող լինել նաև վերաբերմունք, լինի դա զգացական, թե, առավել ևս, մտածական: Այսինքն՝ այս աստիճանի մեջ մտնողները ինքնին գոյություն չունեն, ուրեմն և դասակարգման ինքնուրույն աստիճան ներկայացնել չեն կարող:

Հետևությունը հետևյալն է. այս դասակարգմամբ կողք կողքի են դրվում ոչ համարժեք լեզվական միավորներ՝ անվանողական արժեք ունեցող բառեր (ըստ որում՝ նաև դերանուններ, որոնց մասին մանրամասն խոսք կլինի ստորև), հասկացական իմաստ չունեցող, հարաբերություն պարզաբանող կապեր, շաղկապներ, միայն արտահայտչական արժեք ունեցող ձայնարկություններ, վերաբերականներ: Իսկ սա միասնական, հետևողական դասակարգում չէ:

Է. Աղայանը խոսքի մասերի դասակարգման հիմքում դնում է ի-

³ Տե՛ս Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, նաև **նույնի** ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969:

մաստաբանական սկզբունքը, քանի որ, ըստ նրա, բառի հնչույթային կազմը հայերենում չի կարող վճռորոշ դեր ունենալ բառի խոսքիմասային պատկանելությունը որոշելու համար: Բառաձևը նույնպես ելակետային չի համարում, որովհետև «... բայը, գոյականը և դերանունը իրենց խոսքամասային իմաստով այնքան պարզորոշ կերպով են հակադրվում իրար, որ ձևաբանական հատկանիշին դիմելը դառնում է ավելորդ. նա խոսքի մասերի որոշման համար, այսպես ասած, հավելական հատկանիշ է»⁴:

Հայտնի է, որ Է. Աղայանը կիրառում է երկատման (դիխոտոմիայի) մեթոդը՝ հատկապես հիմք ընդունելով հնչույթների դասակարգման սկզբունքը: Երկատման, հակադրության դեպքում միմյանց պետք է բացառեն, բացասեն համարժեք տրամաբանական մեծությունները, հատկանիշները, որոնք պետք է պատկանեն նույն դասին:

Է. Աղայանը վերլուծությունը բնականաբար սկսում է հասկացությունից, բայց **քար**, **գեղեցիկ**, **գործել**, **մեկ**, **արդեն** բառերին առարկայական կամ հատկանշային հասկացական իմաստ վերագրելուց հետո **նա**, **մենք** դերանուններին, չգիտես ինչպե՞ս և ինչո՞ւ, վերագրում է չտարբերակված հասկացական խոսքիմասային ընդհանուր իմաստ: Բացատրությունը հետևյալն է. «Տարբերակված իմաստ ասելով՝ հասկանում ենք այն, որ բառը հանդես է գալիս որպես առարկայի, հատկանիշի ևն հասկացության կրող...»

Նա, **մենք**, **այս**, **այսպիսի** և նման բառերը արտահայտում են հասկացական իմաստ, բայց ոչ տարբերակված: Դրանք ունեն ոչ թե ինչ-որ առարկայի, հատկանիշի կամ առարկաների, հատկանիշների սեռի, դասի, տեսակի հասկացություն, այլ ընդհանրապես առարկայի, ընդհանրապես հատկանիշի ևն հասկացություն, այսինքն՝ տարբեր խոսքի մասերի ընդհանրացած ու վերացարկված իմաստ, որը խոսքի մեջ մասնավորվում, կոնկրետանում է դիմային (ա, բ, գ դեմքեր), թվային (եզ. և հոգն.), տարածական (խոսողին մոտ, խոսակցին մոտ, երկուսից հեռու) և նման հարաբերություններով: Այդ պատճառով էլ դերանունների իմաստը համարում ենք չտարբերակված»⁵:

Առարկա, հատկանիշ ցույց տվող բառերն իրոք հասկացություններ են, քանի որ անունների վերացարկված արտացոլումն են մեր գիտակցության մեջ, ուստի և դրանցով կարողանում ենք հաղորդակցվել: Մինչդեռ դերանունները հասկացություններ չեն, դրանք առարկաների, հատկանիշների անուններ չեն և այսպես կոչված **խոսքիմասային ընդհանուր**, բայց **չտարբերակված** իմաստ ձեռք են բերում միայն այն ժամանակ, երբ փոխարինում են հասկացություններին, առանց որոնց երբեք չեն կարող գործածվել: Միայն դերանուններով մտածել, հաղորդակցվել չենք կարող:

⁴ Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 114:

⁵ Նույն տեղում, էջ 115:

«Ընդհանրապես առարկայի, ընդհանրապես հատկանիշի հասկացություն» գոյություն չունի, հասկացությունն ունի նշանակելի, այսինքն՝ «տարբեր խոսքի մասերի ընդհանրացած ու վերացարկված իմաստ», ուստի և դա չի կարող խոսքի մեջ մասնավորվել, կոնկրետանալ դիմային, թվային, տարածական հարաբերություններով, որոնք բառիմաստի հետ ոչ մի առնչություն չունեն ու դրան ոչինչ չեն ավելացնում, որովհետև միայն քերականական իմաստ ունեն:

Կարծում ենք շարադրանքից կարելի է եզրակացնել, որ «տարբերակված իմաստ-չտարբերակված իմաստ» հակադրությունը կեղծ է, չի համապատասխանում իրականությանը, քանի որ երկու հատկանիշներն էլ վերագրվում են հասկացությանը, որոնցից երկրորդը գոյություն չունի. նրանով տարբերակվող բառային խումբ չկա: «Հասկացական իմաստ-ոչ հասկացական իմաստ» հակադրությունն իրական է, քանի որ հակադրության մի եզրում անվանողական իմաստ ունեցողներն են ենթադրվում, այսինքն՝ բառերը, մյուս եզրում՝ այդ հատկանիշը չունեցողները՝ ոչ բառերը:

Մյուս հակադրությունները, երկատումները ևս համարժեք չեն, քանի որ նախ՝ առարկայնությունը, որակայնությունը, քանակային հատկանիշը, գործընթացայնությունը հասկացությունների հատկանիշներ են և հասկացական իմաստ-ոչ հասկացական իմաստ համակարգի դրսևորումներ չեն կարող լինել, երկրորդ՝ գործընթացայնությունը, որակային հատկանիշը, քանակային հատկանիշը (որ կարող է և՛ առարկայի, և՛ բայի հատկանիշ լինել չափ ու քանակի դեպքում) մեկ հակադրվում են միմյանց, մեկ որակայնությունը՝ առարկայնությանը, գործընթացայնությունը հակադրվում է ոչ գործընթացայնությանը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ որակային, քանակային հատկանիշների բնորոշում: Սրանք բոլորը միասին առարկայի հատկանիշներ են: Երրորդ՝ անհասկանալի մեկնաբանությամբ *մեկ, գեղեցիկ* բառերը բնորոշվում են ինքնակա հատկանիշի հասկացական իմաստով, իսկ *արդեն*-ին վերագրվում է ոչ ինքնակա՝ գուգորդող իմաստ, որ նշանակում է, թե արդեն բառն իբր ինքնորոշյն գործածություն չունի, մինչդեռ դա, հասկանալի է, այդպես չէ. մակբայ կոչեցյալները նույնպես հասկացություններ են:

Այնուհետև միմյանց հակադրվում են ոչ հասկացական, ոչ անվանողական իմաստ ունեցող միավորներ այն հիմունքով, որ խոսքիմասային իմաստ են համարվում նաև քերականական ու վերաբերական իմաստները: Մակայն հակադրության եզրերն այս դեպքում ևս անհամասեռ են, քանի որ հակադրության մի եզրում քերականական իմաստն է, որ ենթադրում է հարաբերություն, մյուս եզրում՝ վերաբերմունքը, որը ոչ թե հարաբերություն է ենթադրում, այլ համապատասխան դիրքորոշում (ռեակցիա):

Այլևս չխորանալով՝ ասենք, որ նման հակասություններով կազմված երկանդամ (դիխոտոմիայի) համակարգը չի կարող բավարար լինել բառի սահմանման, բառերի տեսակները դասակարգելու համար:

Հասկացության, բառի անվանողական իմաստի հիշյալ մեկնաբանությունները՝ մանավանդ կապված դերանունների, մակբայների հետ, նաև ոչ հասկացական՝ քերականական և վերաբերական իմաստների նմանատիպ հակադրությունների հիման վրա խոսքիմասային իմաստներ առանձնացնելը բավարար չեն անխոցելի դասակարգում ստանալու համար, ուստի պատահական չէ, որ տասնամյակների ընթացքում այն չի կիրառվել ոչ դպրոցական, ոչ էլ բուհական համակարգերում:

Գ. Ջահուկյանի դասակարգումը նախորդներից տարբերվում է նրանով, որ այն ոչ միայն բառերի տեսակների, այլև բառակապակցության և նախադասության անդամների դասակարգում է: Դա երևում է հեղինակի ընտրած հատկանիշներից: Դրանք են՝ **գոյակազմություն, իրադրայնություն, մակադրականություն** և **էանշություն**, որոնցից երկուսը՝ իրադրայնությունն ու մակադրականությունը, ոչ թե բառիմաստաբանական, այլ շարակարգային հատկանիշներ են: Մակադրական հատկանիշով բնութագրվում են ածականը, թվականը, որոշիչ դերանունը, մակբայը, եղանակական բառերն ու բառ-մասնիկները, իսկ իրադրայնությամբ՝ դերանունը, հոդը, ձայնարկությունը, եղանակական բնույթի բառերն ու բառ-մասնիկները:

Այնուհետև երբ Գ. Ջահուկյանն անցնում է գործառական հատկանիշներով բնութագրությանը, այստեղ արդեն, բնականաբար, գործ ունենք զուտ շարահյուսական սկզբունքի հետ, քանի որ ելակետային հատկանիշներն են **հաղորդակազմությունը, միագործառությունը, ինքնահաղորդայնությունը (ինքնաստորոգականություն), լրացականությունը**:

Ճիշտ է, Գ. Ջահուկյանն այնուհետև անդրադառնում է նաև ձևաբանական և բառակազմական դասակարգումներին, բայց վերջիններս արդեն լրացուցիչ բնույթ ունեն⁶:

Ավելի չխորանալով Գ. Ջահուկյանի տեսակետի մեջ՝ ասենք, որ որքան էլ այն հետևողական, գիտական ու տրամաբանական է, այնուամենայնիվ ուսուցողական տեսակետից բավական բարդ է, ուստի դպրոցական համակարգում պարզապես անհնար է այն դասավանդել: Մյուս կողմից՝ այն որոշակի դժվարությունների կարող է հանգեցնել նաև զուգադրական-տիպաբանական հետազոտությունների դեպքում, քանի որ այս սկզբունքը անհրաժեշտ կլինի կիրառել նաև զուգադրվող լեզվի կամ լեզուների խոսքի մասերը վերլուծելու համար, իսկ դրանք, բնականաբար, ունեն իրենց յուրահատկությունները:

Հովհ. Բարսեղյանի խոսքի մասերի ուսմունքն իր հիմքում ունի Մ. Աբեղյանի տեսակետը, սակայն հեղինակն այս հարցում, թվում է, այնքան հետևողական չէ, որը զգացվում է հատկապես ոչ հասկացական իմաստ ունեցող քերականական և վերաբերական իմաստ ունեցող լեզվական միավորներ առանձնացնելու դեպքում:

⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 125-150:

Նա փորձում է իմաստագործառական վերլուծությունների հիման վրա հավասարության նշան դնել բոլոր բառերի իմաստների միջև, ուստի գտնում է, որ. «... եթե իմաստ և հասկացություն ասելով հասկանանք լեզվական յուրաքանչյուր նշանի ոչ թե մտածական-դատողական պրոցեսում կատարած իմաստային դերը, այլ հաղորդակցման մեջ նրա ունեցած արժեքը և այս լեզվական հասարակական գիտակցումը, ապա բոլոր բառերին յուրահատուկ կլինեն բառային իմաստներ, լինեն դրանք առարկայահատկանշային կամ հասկացական, թե առարկայահարաբերական, քերականական և կամ կամային-զգայական, միևնույնն է»⁷:

Հասկացական և ոչ հասկացական իմաստ ունեցող լեզվական միավորների նման մեկնաբանությունը պարզապես անհասկանալի ու անընդունելի է: Ավելին, եթե վերոհիշյալ տրամաբանությամբ հասկացական և առարկայահարաբերական, քերականական ու կամային-զգացական իմաստների միջև հավասարության նշան է դրվում, ապա ի նչ է նշանակում վերջիններիս այսպիսի բնորոշումը. «Խոսքիմասային կամ կարգային (կատեգորիալ) բացասական հատկանիշով բնութագրվող բառակարգեր»⁸:

Ցանկացած երևույթ, առարկա անհրաժեշտ է բնութագրել որևէ հատկանիշով: Միայն բացասական հատկանիշով, որ նշանակում է առանց հատկանիշի, ոչինչ բնութագրել հնարավոր չէ: Այս առումով անհնար է հասկանալ հետևյալ բնորոշումը. «Ձայնարկությունները գուրկ են խոսքիմասային իմաստից կամ ունեն խոսքիմասային զրո իմաստ: Հայերենի խոսքիմասային համակարգի մեջ նրանք կարող են մտնել որպես այդ համակարգի բացասական հատկանշակիր անդամ»⁹:

Այսուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում հիշատակել Հովհ. Բարսեղյանի հետևյալ դիտարկումը, որը ժամանակին գուցեև որոշակի ազդակ է հանդիսացել Ա. Խաչատրյանի առաջարկած սկզբունքի համար, որին կանդիդատուսանք ստորև: Նա գրում է. «Ինչպես, օրինակ, այն հարցին, թե նրան քննադատողները, որ բառային տարբեր նշանակության թվականները, դերբայներն ու դերանունները ածական համարելը Մ. Աբեղյանի կողմից դիտում են որպես սուկ շարահյուսական հիմունքով կատարված անընդունելի, այլև ոչ գիտական խմբավորում, ի նչ սկզբունքով են մեկ մակրայ խոսքի մասի մեջ միավորում լեզվամտածողությամբ իսկ միանգամայն տարբերակված **ինչպե՛ս, ինչքա՛ն (որքա՛ն), ե՛րբ, ո՛ր** տրամաբանական հարցերի պատասխանող **ժամանակային, տեղի** և այլ նշանակության **որակական, քանակական, հայրաբար, արագ-արագ, շատ-շատ, քիչ-քիչ, եռակի, ուշ, շուտ, հիմա, ներքուստ, վեր, հեռու** և այլ բառեր: Պատասխանը պարզ է, սրանց խմբավորողը այդ բառերի հատկանիշի հատկանիշ նշանակելու խոսքիմա-

⁷ **Հովհ. Բարսեղյան**, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980, էջ 381:

⁸ Նույն տեղում, էջ 382:

⁹ Նույն տեղում, էջ 396:

սային նշանակությունն է և սրանց բոլորի պարագայական գործառույթ-
յունը: Եթե այսպիսի բառախմբավորումը կարելի է անվանել բառաքե-
րականական սկզբունքով կատարված խմբավորում, իսկ, մեր կարծի-
քով, դա իրականում ավելի շատ քերականական սկզբունքով կատար-
ված խմբավորում է, ապա Մ. Աբեղյանի՝ ածականի խոսքի մասի տար-
բերական հիմունքն ավելի շուտ կարելի է բառաքերականական հա-
մարել, մանավանդ որ ածականի ներսում այնքան իմաստային խայ-
տաբղետություն չկա, որքան մակբայի ներսում»¹⁰:

Ճիշտ է, ժամանակագրական առումով Մ. Աբեղյանի դասակար-
գումը նախորդել է վերը ներկայացրածներին, բայց մենք այն միտում-
նավոր ենք տեղափոխել այստեղ:

Մ. Աբեղյանի դասակարգմանն այստեղ մանրամասն չենք անդրա-
դառնա, քանի որ նախ՝ մասնագիտական գրականության մեջ այն բա-
վական լուսաբանվել է (թեպետ, ցավոք, հիմնականում միակողմանիո-
րեն), երկրորդ՝ հաջորդ դասակարգումը, որին կանդրադառնանք ու
կաշխատենք մանրամասն ներկայացնել, հենվում է Մ. Աբեղյանի
սկզբունքների վրա. աշխատում ենք խուսափել կրկնությունից:

Զարմանալին այն է, որ տասնամյակներ շարունակ ասվել է, թե
իբր խոսքի մասերը դասակարգելիս Մ. Աբեղյանի ելակետը նախադա-
սությունն է եղել, թե իբր նա խոսքի մասերը ներկայացրել է որպես նա-
խադասության անդամներ, ուստի սա շարահյուսական դասակարգում
է և ոչ թե իմաստաբանական: Իրականում այդպես չէ:

Մ. Աբեղյանի դասակարգման ելակետը բառն է, որի մասին հենց
ինքը՝ Մ. Աբեղյանն է ասում. «Ես իմ քերականությունների մեջ չեմ հի-
շատակել և չեմ առել «մասն բանի» և «մասունք բանի» տերմինը, այլ
գործածել եմ «բառերի տեսակներ»:

«... Ես իմ բազմամյա փորձից գիտեմ, որ միջնակարգ դպրոցն ա-
վարտողներն անգամ հաճախ չեն հասկանում «մասունք բանի» կամ
«խոսքի մասեր» տերմինի նշանակությունը: Ինչո՞ւ այդպես: Որովհետև
«մաս» պիտի ասեն և «տեսակ» պիտի հասկանան: ... Ժամանակն է, որ
խորհրդային իշխանության օրով դեն ձգվի այդ հնավանդ տերմինը... և
ասվի **բառերի տեսակներ**, ինչպես որ վաղուց գործածում են ֆրանսիա-
կան և գերմանական քերականությունների մեջ»¹¹:

Այժմ ներկայացնենք Մ. Աբեղյանի դասակարգման տրամաբանա-
կան ու հետևողական շարունակությունը հանդիսացող գիտական, ան-
հակասական այն մեթոդը, որը մասնագիտական ասպարեզում քիչ
հայտնի, բայց տրամաբանորեն միանգամայն համոզիչ, հիմնավորված,
ուսումնական առումով մատչելի դասակարգում է:

Նախ ասենք, որ կան հոդվածներ, որոնք մենագրության արժեք են
ունենում: Այս առումով Ա. Խաչատրյանի հոդվածը «Խոսքի մասերի

¹⁰ Նույն տեղում, էջ 198:

¹¹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, Եր., 1985, էջ 532:

հարցումային դասակարգումը», բացառիկ երևույթ է, քանի որ, մեր կարծիքով, տալիս է այս կնճռոտ խնդրի սպառիչ պատասխանը¹²:

Հնուց ի վեր հայտնի է, որ հարցը ճշմարտությունը, իրականությունը վեր հանելու, պարզաբանելու նպատակ է հետապնդում: Պատահական չէ, որ հին մեծագույն փիլիսոփաներից մեկը՝ Սոկրատեսը, հարց տալու արվեստ է մշակել, որի նպատակը հենց ճշմարտությունը բացահայտելն է եղել: Մինչև օրս էլ հարցը ծառայում է իր նպատակին:

Այս առումով Ա. Խաչատրյանի առաջարկած հարցումային կամ, այլ կերպ ասած, համապատասխան հարցեր տալու եղանակով խոսքի մասերը (Մ. Աբեղյանի ճշմարիտ բնորոշումով՝ բառերի տեսակները) տարրորոշելու սկզբունքը հնարավորություն է տալիս սահմանելու, դասակարգելու հայոց լեզվի ողջ բառապաշարը:

Այժմ ներկայացնենք այդ մեթոդը, բայց հողվածը հղումներով չծանրաբեռնելու նպատակով համապատասխան էջերը նշենք փակագծերում:

Սկսենք ամբողջական մեջբերումով. «Մինչև այժմ եղած խոսքիմասային դասակարգումների զգալի մասի հիմնական թերություններից մեկը, մեր կարծիքով, այն է, դասակարգողը նախապես գիտե, թե ինչ պիտի ստանա արդյունքում և, ըստ այդմ էլ, դասակարգումը կատարում է այնպես (եթե նույնիսկ դրանով խախտում է դասակարգման հիմունքի միասնականությունը), որ արդյունքում ստանա իր գիտեցածը: Մյուս կարևոր թերությունը կապվում է **բառ** տերմինի ըմբռնման հետ: Քանի որ **բառ** ասելով սովորաբար հասկանում են այն բոլոր միավորները, որոնք մտնում են բառարանների (բառապաշարի) մեջ, ապա հետագոտողներն էլ ձգտում են կատարել այնպիսի դասակարգում, որ տարածվի բոլոր բառերի վրա անխտիր: Բայց, ինչպես հայտնի է, մինչև այժմ գիտնականներին չի հաջողվել տալ բառի միասնական, բոլորի կողմից ընդունված սահմանում: Դեռ ավելին, դեռևս չի հաջողվել գտնել մի այնպիսի ընդհանրական հատկանիշ, որ հավասարապես հատուկ լինի բառ կոչվող բոլոր միավորներին: Իսկապես, հնարավոր չէ ցույց տալ այնպիսի մի հատկանիշ, որի տակ միավորվեն և՛ **լիմաստ**, և՛ **թերիմաստ** բառերը: Հետևապես և հնարավոր չէ գտնել դասակարգման մի այնպիսի հիմունք, որ տարածելի լինի թե՛ **լիմաստ** և թե՛ **թերիմաստ** բառերի վրա: Բառի լայն ըմբռնումը էմպիրիկ, ոչ գիտական ըմբռնում է: Գիտական է բառի այն ըմբռնումը, որը ներառում է միայն **լիմաստ** բառերը: Այս առումով բառը միանգամայն սահմանելի է: Ոչ **լիմաստ** (թերիմաստ, ձևական) բառերը գիտական իմաստով բառեր չեն, գտնվում են դրանցից տարբեր այլ հարթության վրա, հետևաբար և չեն կարող խոսքի մասերի մեջ խմբավորվել կամ խոսքի մաս համարվել» (էջ 65):

Անվանողական արժեք ունեցող բառերը կոնկրետ բառային իմաստի հիման վրա բնութագրվում են նաև ընդհանուր բառաքերականա-

¹² Տե՛ս Ա. Խաչատրյան, Խոսքի մասերի հարցումային դասակարգումը, ԲԵՀ, 1986, հ. 3, էջ 56-65:

կան՝ խոսքիմասային իմաստով, որի շնորհիվ դրանք հնարավոր է լինում խմբավորել. արտալեզվական սուբստանցիոնալ, իմաստներով բառերը տարբերակվում, առանձնանում են, իսկ ներլեզվական, ընդհանրական հատկանիշներով՝ համակարգվում, միանում (տե՛ս էջ 56):

Դերանունները զուրկ են կոնկրետ բառային իմաստից, ունեն միայն բառաքերականական իմաստ: Դրանով է պայմանավորված նրանց կարգային արժեքն ու անուններին ազատորեն փոխարինելու յուրահատկությունը: Մակայն դերանունները մեծ մասամբ բառաքերականական իմաստին զուգընթաց արտահայտում են նաև այլ կարգի քերականական իմաստներ՝ դիմանշություն, ցուցանշություն, որոշյալություն, անձնանշություն, իրանշություն և այլն: Խոսքից դուրս դերանուններն անվանողական արժեք չունեն, մինչդեռ համատեքստում, խոսքային իրադրության մեջ անձնանշության, ցուցանշության, որոշյալության, ստացականության, դիմանշության իմաստներով օժտված դերանունները մատնացույց են անում որոշակի իրակություններ, ունեն նշանակելի: Այս առումով բոլոր դերանուններից առանձնանում են հարցական դերանունները, որոնք մեծ մասամբ իրենց առաջնային նշանակությամբ անխառն բառաքերականական իմաստ են արտահայտում և՛ անկախ դիրքում, և՛ խոսքային իրադրության մեջ: Հարցական դերանունները ձևավորվում են բառաքերականական կարգերին համապատասխան. նրանց արտահայտած իմաստները համընկնում են խոսքի մասերի (այլև նախադասության անդամների) քերականական իմաստներին: Որպես կանոն, միննույն հարցը կարող է տրվել նույն խոսքի մասի մեջ մտնող գրեթե բոլոր անուն և դերանուն բառերին: Հարցական դերանունները միշտ էլ խոսքի մասերը և նախադասության անդամները զանազանելու հուսալի միջոց են եղել ու կան: Մակայն, ցավոք, գիտական քերականությունների մեջ համապատասխան հարցերով բառերի տեսակները դասակարգելուն ելակետային դեր չի հատկացվել (տե՛ս էջ 56-57):

Այնուհետև հեղինակն անվանողական իմաստ ունեցող բառերը խմբավորում, դասակարգում է ըստ համապատասխան հարցերի: Բնականաբար, հարցն ուղղվում է անկախ, բառարանային, արտահամատեքստային միավորին կամ ամենաընդհանրական, ամենաչեզոք բառային շրջապատում (է էական բայի շրջապատում) գտնվող բառին: Ըստ այդմ հեղինակն առանձնացնում է բառաքերականական համապատասխան իմաստներ արտահայտող ութ հարց. Ի՞նչ (առարկայանշություն), ինչպիսի՞ (որականշություն), քանի՞ (թվանշություն), ի՞նչ անել (ընթացանշություն), ինչպե՞ս (ձևանշություն), ինչչա՞ փ (չափանշություն), որտե՞ղ (տարածանշություն), ե՞րբ (Ժամանականշություն): Ըստ այսմ հասկացական իմաստ ունեցող բառերը կբաժանվեն ութ խմբի՝ առարկայանիշ (քար, սեր, տղա), որականիշ (մեծ, երկաթյա, քաղաքային), թվանիշ (երկու, հիսուն, կես), ընթացանիշ (գրել, դեղնել, մոտենալ), ձևանիշ (արագ, միասին, համառորեն), չափանիշ (շատ, բազ-

միցս, փոքր-ինչ), տարածանիշ (այսկողմ, ստորև, հեռու), ժամանակա-
նիշ (այժմ, միշտ, վաղուց): Այս բառախմբերից չորսը (առարկայանիշ,
որականիշ, թվանիշ, ընթացանիշ) իրավացիորեն համարվում են ա-
ռանձին խոսքի մասեր (գոյական, ածական, թվական, բայ): Համապա-
տասխան հարցերի առումով անհրաժեշտ է նշել, որ բոլոր գոյականնե-
րը պատասխանում են ի՞նչ հարցին, ի՞նչ – տղա, աշակերտ, զինվոր,
իսկ ո՞վ հարցին՝ խոսքի մեջ առկայացած որոշյալ հոդ ունեցող գոյա-
կանները (ո՞վ – տղան, աշակերտը, զինվորը): Ո՞ր հարցին պատասխա-
նում են որոշյալ լրացյալ ունեցող բոլոր ածականները (հմատ. ինչպիսի՞
գիրք – հետաքրքիր գիրք, ո՞ր գիրքը – հետաքրքիր գիրքը) (տե՛ս էջ 57):

«...Հայերենի չորս կարևոր խոսքի մասերից յուրաքանչյուրին ան-
կախ դիրքում համապատասխանում է մեկական հարց. գոյականին՝
ի՞նչ, ածականին՝ ինչպիսի՞, թվականին՝ քանի՞, բային՝ ի՞նչ անել: ...Բ-
րականում ոչ մի հիմք չկա ի՞նչ, ինչպիսի՞, քանի՞, ի՞նչ անել հարցերի
պատասխաններին վերագրելու կարգային խոսքիմասային, բառային
առանձին, ինքնուրույն տեսակների արժեք, այսինքն՝ առավել ընդհա-
նուր բառաքերականական իմաստ, իսկ ինչպե՞ս, ինչչա՞փ, ո՞րտեղ,
ե՞րբ հարցերի պատասխաններին՝ դասային արժեք, այսինքն՝ պակաս
ընդհանուր բառաքերականական իմաստ: Բոլոր ութ հարցերի պա-
տասխան հանդիսացող հասկացական իմաստ ունեցող բառերին ան-
հրաժեշտ է վերագրել նույնական արժեք» (էջ 58):

Ա. Խաչատրյանը իրավացիորեն նկատում է, որ խոսքի մասերի ա-
վանդական դասակարգման մեջ միասնական սկզբունք չի կիրառվել
բոլոր հասկացական իմաստ ունեցող բառերի նկատմամբ. գոյականը,
ածականը, թվականը և բայը դասակարգված են իմաստաբանական
հիմունքով (սրանք առանձնացնելու համար ելակետ է ընդունվել ընդ-
հանուր խոսքիմասային իմաստը), իսկ մակբայը՝ գործառական-շա-
րահյուսական հիմունքով (սա առանձնացնելու համար առաջին հեր-
թին նկատի է առնված բայի վրա դրվելու, բային լրացնելու հատկանի-
շը): Ճիշտ է, հետագայում փորձ է արվել մակբային վերագրելու մեկ
ընդհանուր, խոսքիմասային իմաստ, այն է՝ հատկանիշի հատկանիշ
արտահայտելու իմաստ, սակայն դրանով ոչինչ չի փոխվել. քանի որ
հատկանիշի հատկանիշ բնորոշումը ևս իր հիմքում գործառական է:

Մակբայի չորս տեսակների իմաստաբանական միակ ընդհան-
րությունը ոչ առարկայանշություն՝ հատկանշություն արտահայտելն է,
որով նրանք միանում են հատկանիշ ցույց տվող մյուս խոսքի մասե-
րին: **Հատկանշություն** տերմինն այնքան լայն ընդգրկում է ունենում
այս դեպքում, որ անհնար է դրա տակ ենթադրվող բառաքերականա-
կան իմաստները վեր հանել մեկ հարցով, մանավանդ որ դրանք այդ-
քան բազմազան են: Քերականագիտության համար կարևոր են հատ-
կանշության մասնավորված ըմբռնումները, որոնք ելակետ են խոսքի
մասերը կամ բառերի տեսակները սահմանելու համար (տե՛ս էջ 58):

Եվ իրոք, առարկայի հատկանիշները՝ որակը և քանակը, առանձին, ինքնուրույն հասկացություն համարելը ենթադրում է, որ գործողության հատկանիշները ևս կարող են այդպիսին համարվել: Տարբերությունն այն է, որ գործողության հատկանիշներն ավելի բազմազան են, քանի որ գործողությունը տեղի է ունենում ժամանակի և տարածության մեջ, որոշակի ձևով և չափ ու քանակով կամ հաճախականությամբ, ուստի և ինչպես որ առարկայի հատկանիշներն են հասկացություններ, այդպես էլ գործողության հատկանիշներն են ինքնուրույն հասկացություններ: Նույնը կարելի է ասել նաև այլ հատկանիշների հատկանիշների մասին:

Այսպիսով, համապատասխան հարցերով անվանողական արժեք ունեցող բառերը խմբավորելու սկզբունքը հետևողական կիրառելու դեպքում կունենանք ութ խոսքի մաս **գոյական, ածական, թվական, բայ** (ընթացական), **կերպական** (ձևական), **չափական, տարածական, ժամանակական**: Լեզվի համակարգային ըմբռնման հիման վրա անհրաժեշտաբար յուրաքանչյուր խոսքի մաս պետք է ունենա համապատասխան դերանուն՝ անվանողական արժեք չունեցող բառախումբ: Պարզ է, որ դրանք առաջին հերթին հարցական դերանուններն են, որոնց հիման վրա տեղի է ունենում դասակարգումը (տե՛ս էջ 60-61):

Ա. Խաչատրյանի առաջարկած մեթոդի արդյունքները հիմնականում արդարացվում են ակադ. Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ և կադապարային դասակարգումներով¹³: Ինչո՞ւ է այդպես: Ա. Խաչատրյանը դա բացատրում է այսպես. «... տարբեր սկզբունքներով կատարվող դասակարգումները չեն բացառում միմյանց: Յուրաքանչյուր դասակարգում, էթե նրանում հետևողականորեն կիրառված են դասակարգմանը ներկայացվող հիմնական պահանջները (դասակարգման հիմունքի միասնականություն, դասակարգվող միավորների փոխբացատելիություն և այլն), այս կամ այն չափով գիտական հետաքրքրություն է ներկայացնում (կարելի է այն չընդունել, բայց հերքել հնարավոր չէ)» (էջ 63):

Տերմինների մասին կարելի է ասել հետևյալը. **գոյական, ածական, թվական, բայ**, հասկանալի է, պետք է մնան նույնությամբ: Մյուս տերմինները, որ հեղինակը փորձել է կազմել **-ական** վերջածանցով, գուցե ավելի հարմար է փոխարինել բառակապակցական տարբերակով. **ժամանականիշ կամ ժամանակ ցույց տվող բառեր, տարածանիշ կամ տեղ ցույց տվող բառեր, ձևանիշ կամ ձև ցույց տվող բառեր, չափ ու քանակ ցույց տվող բառեր և ոչ թե չափական կամ չափանիշ**:

Բառը սահմանելու, տեսակները տարորոշելու տրամաբանական այս եղանակն այնքան պարզ, մատչելի և ուսուցման առումով այն աստիճան դյուրին է, որ կիրառելի է և՛ դպրոցական, և՛ բուհական համակարգերում:

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 125-150, **նույնի** Խոսքի մասերի կադապարային դասակարգումը, «Լրաբեր», 1976, հ. 1, էջ 16-29:

Ավելացնենք նաև ոչ պակաս կարևոր հետևյալ հանգամանքը. այս մեթոդը կիրառելու դեպքում հնարավոր կլինի տիպաբանական ուսումնասիրություններ կատարել, զուգադրել համարժեք լեզվական միավորները, վեր հանել ընդհանրություններն ու տարբերությունները և սահմանել հանրույթները, որ կարևոր խնդիր է լեզվաբանության մեջ:

Երբեմն որոշ առարկություններ են լինում կապերը, շաղկապները, ձայնարկությունները և վերաբերականները անվանելու վերաբերյալ. դրանք բա՞ն են, թե՞ ոչ:

Այս առումով լավ կլինի՝ լսենք փիլիսոփաներին: Գ. Բրուսյանը գրում է. «... ինչպես լեզվի և մտածողության, այնպես էլ բառի և հասկացության միասնությունը նրանց նույնություն չի նշանակում: Յուրաքանչյուր բառ ունի իմաստ, միշտ մի որևէ բան է նշանակում: Բայց ոչ բոլոր բառերն են, որ հասկացություն են արտահայտում: Ձայնարկությունները, կապերը, շաղկապներն այնպիսի բառեր են, որոնք ունեն անպայման որոշակի իմաստ և ուրույն նշանակություն լեզվում, բայց հասկացություն չեն արտահայտում: **Ա՛խ, վա՛խ, օ՛, դեպի, մասին, և, ու** և այլ բառերը չեն արտահայտում ոչ մի հասկացություն»¹⁴:

Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ Գ. Բրուսյանը վերոնշյալները թվարկելիս վերջին դեպքերի համար **բառը** պետք է չակերտների մեջ առնէր, բայց քանի որ փիլիսոփաների համար կարևորը բառի և հասկացության սահմանագատումն է, ուրեմն մեկնաբանության տրամաբանական շարունակությունը մնում է լեզվաբաններիս: Դա անելու համար անհրաժեշտ է փիլիսոփայի միտքը շարունակել այսպես. Գ. Բրուսյանի հիշատակած հասկացական իմաստ չունեցողները հենց այդ պատճառով էլ բառեր չեն, այլ լեզվական այնպիսի միավորներ, որոնց մի մասը մատնանշում է քերականական հարաբերություններ, իսկ մյուս մասը՝ վերաբերմունք: Իսկ թե՞ դրանք ինչո՞ւ են տեղ գտել բառարաններում, պատճառն այն է, որ լեզվական ցանկացած երևույթ պետք է բացատրել առաջին հերթին լեզվաբանորեն, ուստի բառարաններում դրանց դիմաց գրված է **կապ, շաղկապ, ձայնարկություն, վերաբերական**, բացատրված է այն, ինչ ասացինք, և տրված են համապատասխան քերականական ու վերաբերական իմաստները:

Ա. Խաչատրյանի առաջարկած հարցումային մեթոդը, որը հենվում է Մ. Արեղյանի դասակարգման վրա, անհակասական է, տրամաբանական, ուստի և դյուրին է ընկալվում: Այն կարելի է կիրառել և՛ դպրոցում, և՛ բուհում, իսկ դասավանդողներիս նպատակը լեզուն մատչելի մեթոդներով սովորեցնելն է:

Բանալի բառեր – իմաստարանական դասակարգում, բառաբերականական շարք, հարցական դերանուններ, բառեր, որոնք նշանակում են տեղ (որտե՞ղ), ժամանակ (ե՞րբ), գործողության կերպ (ինչպե՞ս), չափ ու քանակ (որչա՞նի, ինչչա՞նի, որքա՞ն, ինչքա՞ն)

¹⁴ Գ. Բրուսյան, Ձևական տրամաբանության դասընթաց, Եր., 1967, էջ 101:

БАГРАТ НЕРСЕСЯН – Метод классификации слов с помощью вопросов. – В статье раскрывается метод классификации частей речи, предложенный А. Е. Хачатрянном («ВКУ», 1986, № 3, с. 56–65). Хачатрян утверждает, что в ряду имён существительных, прилагательных, числительных и глаголов должны стоять и наречия, поскольку они имеют понятийное значение и отвечают на соответствующие вопросы; это слова, указывающие время, место, образ действия, меру и степень. Таким образом, все части речи отвечают на соответствующие вопросы: что?, какой?, сколько?, что делать?, когда?, где?, как?, во сколько раз? (в какой степени?, в какой мере?). Определение частей речи без учёта понятийного значения будет эмпирическим.

С помощью вопросительных местоимений формируются соответствующие лексико-грамматические разряды слов. Предлагаемая классификация последовательно отражает семантическую дифференциацию частей речи и даёт возможность сопоставлять адекватные языковые единицы, выявлять их общность и различия, определять универсалии. Метод логичен и прост, его можно использовать в школах и вузах.

Ключевые слова: *семантическая дифференциация, лексико-грамматический разряд слов, вопросительные местоимения, слова, обозначающие место, время, образ действия, меры и степени*

BAGRAT NERSISYAN – The Method of Classifying Words through Questions. – In this article, we are trying to present to a wide circle of researchers the method of classifying parts of speech, which in the eighties within the limits of one article was proposed by A. E. Khachatryan (A. E. Khachatryan, Classification of Parts of Speech through Questions, Bulletin of Yerevan University, 1986, No. 3, pp. 56-65).

A. Khachatryan quite logically asserts and convinces us that adverbs should rightfully take their place next to nouns, adjectives, numerals, and verbs as they have a conceptual meaning and answer the corresponding questions: these are words indicating time, place, the manner of action, measure and degree.

Thus, all parts of the speech answer the corresponding questions: what? what kind of? how much? what to do? when? where? how? how many times? (to what degree? to what extent?).

The definition of parts of speech without considering the conceptual meaning will be empirical.

With the help of interrogative pronouns, the corresponding lexical and grammatical categories of words are formed. The proposed classification logically reflects the semantic differentiation of parts of speech.

In typological studies, it is possible to compare adequate language units, to identify their similarities and differences, to determine language universals by this method, which is very important for linguistics. This method is logical, and therefore simple, so it can be used in schools and universities.

Key words: *semantic differentiation, lexico-grammatical classes of words, interrogative pronouns, words denoting place (where?), time (when?), manner of action (how?), measures and degrees (how many times? to what degree? to what extent?)*